



Խ. ԿԱՆԱՅԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ*

ՃԵՄԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Ճեմարանի աշակերտներն իրենց աշխատանքային օրվա մեծ մասը նվիրում էին իրենց դասերի պատրաստմանը, շատ էին զբաղվում ընթերցանությամբ: Ճեմարանի հարուստ գրադարանն սպասարկում էր ամենայն սիրով աշակերտության ինքնագարդացման գործին:

Ճեմարանի դպրոցական բաժնի սաները, երեկոյան երկու ժամվա տևողությամբ սերտողությունից հետո, ժամը 9-ին գնում էին քննիչ, իսկ լսարանական բաժնի ուսանողները կարող էին պարասպել մինչև ժամը 12-ը և դեռ ավելի:

Չուտ ուսումնական աշխատանքներից դուրս, ճեմարանցիներն զբաղվում էին նաև այլ հասարակական-գրական գործունեությամբ: Կային որոշ խմբակներ: Օրինակ, մեր լսարանի ուսանողները (Ա լսարան, 1902—1903) կազմակերպել էին հրատարակչական ընկերություն, որի նախագահը ես էի, իսկ քարտուղարը՝ Սիոն Ասլանյանը⁶:

Հիշյալ ընկերությունից բացի, մի խումբ ընկերներով կազմել էինք մի ուրիշ մարմին, որի նպատակն էր կապ հաստատել Երևանի միջնակարգ դպրոցների հայոց թեմակա-

դպրոցի և ուսաց գիմնազիաների աշակերտների հետ: Կապը հատկապես սերտ էր գիմնազիայի աշակերտության հետ: Հիշում եմ մի հավաքույթ, որ տեղի ունեցավ ճեմարանի սենյակներից մեկում: Ներկա էր գիմնազիայի աշակերտների մի խմբակ Գրոյի (այժմ հայտնի հոգեբույժ) գլխավորությամբ:

Գիմնազիայի աշակերտները դպրոցական դասերից հետո զբաղվել են հայերենով, հատկապես հայոց պատմությամբ: Երևանի գիմնազիան փաստորեն հայկական ուսումնական հիմնարկ էր. նրա աշակերտները սիրում էին իրենց մայրենի լեզուն, իրենց պատմությունը. նրանց հոգին մնում էր անարատ. ուսուցիչներն սովորեցնում էին մոռանում նաև իրենց լեզուն և իրենց գիրն ու գրականությունը:

Հաճախ Մենդյան և Զատիկի տոներին, մանավանդ ամառվան արձակուրդին, մենք ցրվում էինք գյուղերը և կազմակերպում դասախոսություններ, երեկույթներ, ներկայացումներ: Ճեմարանի աշակերտները այս կամ այն կերպ մասնակցում էին նաև մեր հասարակական-քաղաքական կյանքին՝ հարելով որևէ հոսանքի: Կային «Նոր-դար»-ական, «Մշակ»-ական հոսանքներ, ապա հնչակյան, դաշնակցական և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ: «Նոր-դար»-ական, «Մշակ»-ական հոսանքներին հարող մարդիկ զբաղվում էին լոկ միմյանց հետ վիճարանելով: Կարգում էին թերթեր և արժարժված

* Ետունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № 2-ից:

⁶ Այդ ընկերության մասին գրել եմ իմ «Հուշեր»-ում, «Տեղեկ» սիր 2. Մ. Ինստիտուտի», 1962 թ., № II:

խնդիրները շուրջը բանակովով զբաղվում: Ճեմարանում մեծամասնություն էր կազմում դաշնակցության խումբը, որին գլխավորում էր Միմոն Գրուզդինյանը (Վրացյան): Հնչակյաններից, եթե չեմ սխալվում, աչքի էր ընկնում Գուրգեն Հայկունին, որ հետո հարել է սոցիալ-դեմոկրատներին: 1905 թվականից հետո աշխատել է սոցիալ-դեմոկրատական խումբը, որի ղեկավարներն էին Քաղոս Ավդալբեգյանը, Առաքել Առաքելյանը և Նիխ Մուսայելյանը:

Ճեմարանում տեղի են ունեցել նաև աշակերտական խռովություններ: Մի անգամ մեծ ցույց է եղել Ճեմարանի վարչության դեմ (կարծեմ 1890—1892 թ. թ.) և Ճեմարանից արձակվել են շուրջ 80 աշակերտներ, որոնք բոլորն էլ տեղավորվել են Քիֆլիսի ներսիսյան դպրոցում և թեմական մյուս դպրոցներում:

Երկրորդ ցույցը տեղի է ունեցել 1906—1907 ուսումնական տարում: Ցույցի առիթը եղել է այն, որ Ճեմարանի վարչությունը (ոսկիտոր՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան) Ճեմարանից արձակում է Աղեկյանին և Փիլոսյանին: Ճեմարանի ուսանողների և աշակերտների մի խումբ, 24 հոգի, որը ղեկավարում էին Քաղոս Ավդալբեգյանը և Առաքել Առաքելյանը, ընկերակցությամբ Մուսայելյան Նիխայի, Աղաջանյան Ալեքսանի, Գուրգեն Հայկունու և ուրիշների, բողոքում է վարչությունը դեմ, թե ընկերների արձակումը հիմնավորված չէ, արդարացի չէ: 24-ականները պահանջում են վերականգնել նրանց իրավունքը: Նրանք նույնիսկ հանդես են գալիս մամուլում: Թ. Ավդալբեգյանը «Մշակ»-ում հրատարակում է մի շարք հոդվածներ: Վարչությունը չի ընդառաջում բողոքներին: Վերջիններս, ի նշան դժգոհության և որպես բողոք կատարված անարդարության դեմ, կամավորապես հեռանում են Ճեմարանից: Բայց կարճ ժամանակից հետո, բոլոր հեռացողները վերադառնում են Ճեմարան և շարունակում իրենց ուսումը:

Տարվա ընթացքում Ճեմարանում տեղի էին ունենում մի շարք տոնական հանդեսներ: Մեզ համար առանձնապես ցանկալի տոն էր Ճեմարանի տոնը, որ տեղի էր ունենում սեպտեմբերի վերջերին: Տոնահանդեսը տևում էր մի քանի օր: Այդ օրերին արդեն մենք հազնում էինք մեր նոր, տաք զգեստները: Մեր հագուստը կարվում էր մուգ-կապույտ գույնի ընտիր, բարձրորակ մահուդից: Գպրոցական բաժնի աշակերտները հազնում էին սովորական բլուզ և շալվար, կապում կաշվի գոտի, իսկ լսարանցիք նույն կտորից, սակայն բլուզը փոխարինվում էր մի տեսակ բաձկոնով երկու շարք կոճակներով, կապում

էին նույն կտորից պատրաստած գոտի: Գլխարկը դարձյալ մահուդից կարած ֆես էր: Ցրտերին հազնում էինք վերարկու, ֆարաջալի նման: Եկեղեցի հաճախելիս այդ վերարկուն հազնեղ պարտադիր էր: Ճեմարանական այդ ֆարաջան հետագայում, Մինաս Բերբերյանի տեսչության ժամանակ, փոխարինվում է աշխարհիկ վերարկուով, իսկ ֆեսի փոխարեն դնում էին սովորական ուսանողական գլխարկ:

Ճեմարանի տոներին Վաղարշապատ ավանը դառնում էր բազմամարդ, աշխույժ: Ճեմարանի, վանքի բակերը օր ու գիշեր թնդում էին ուխտավոր ժողովրդի ուրախության, զվարճության ձայներից: Հնչում էր հայկական զուռնան, լսվում էին հայ ժողովրդական երգերի, «Ելե՛ք»-ների դալալները, տղա ու աղջիկ թև թևի տված դոփում էին գետինը իրենց խմբակային շուրջպարերով, մարդիկ սեևոտն հայացքներով դիտում էին հեզաձևուն հայ աղջիկների մենապարերը և ունկընդրում նրանց քաղցրանուշ մեղեդիները:

Ճեմարանի աշակերտների ձեռքով գույնզգույն թղթերից պատրաստած լապտերները և թղթե շղթաները զարդարում էին Ճեմարանի ողջ բակը:

Ճեմարանի տոնի օրը կազմակերպվում էր նաև հատուկ հանդես, ուր հրապարակ էին գալիս Ճեմարանի դասախոսները հատուկ զեկուցումներով: Ելույթ էին ունենում աշակերտներն ու ուսանողները: Ճեմարանի տոնին, առհասարակ, բոլոր հանդեսներին շուրջ ու փայլ էր տալիս Կոմիտասը իր երգեցիկ խմբով:

Ճեմարան և Կոմիտաս... անուններ նվիրական և անբաժնելի: Ճեմարանը վերհիշելով, մեր մտքի առաջ պատկերանում է անմոռաց Կոմիտասն իր ամբողջ վեհույթյամբ, Կոմիտասին հիշելով, մեր մտքի տեսողության առաջ է մեր Ճեմարանը զորովալից, մեր «ալմա մատեր»-ը:

Տոնի առթիվ Ճեմարանի սեղանատան ճոխ սեղանի շուրջը նստում էին ուսանողներն ու աշակերտներն իրենց դասախոսների հետ միասին: Մեկը մյուսի հետևից սեղանակիցները բաժակաձառեր էին նվիրում Ճեմարանի հարստությունն ու բարգավաճման համար: Հատկապես հուզիչ ու սրտառու էին աշխարհի դանաղան վայրերից ստացված Ճեմարանի նախկին սաների հեռագրերը: Մեկը բարձրաձայն կարգում էր հեռագիրը և հայտնում, թե որտեղից և ո՞ւմից է ստացված: Հեռագրում էին Ռումինիայից, Բուլղարիայից, Վանից, Պոլսից, Նյու-Յորքից, Չիկագոյից, Փարիզից, Բեռլինից, Պետերբուրգից, Մոսկվայից և Կովկասյան զանազան գյուղերից ու քաղաքներից: Նրանք շնորհավորում էին

մայր ձեմարանի տոնը և բարեմաղթութիւններ անում: Հեռագրում էին եղբայր Խեչումյանը, եղբայր Քերոբը, եղբայր Թովմյանը և ուրիշներ: Ձեմարանի ներկա աշակերտներից կամ ուսանողներից շատ-շատերը ճանաչում էին շնորհավորողներին, մինչև անգամ շատ տարիներ առաջ ավարտած ընկերներին, եղբայրներին, որովհետև նրանց բոլորի մասին սերնդից սերունդ պատմվում էր:

Օ, անմոռաց օրեր, իմ պատանեկութեան երջանիկ օրեր...:

Մենդյան տոներ, Զատիկի տոներ, Բարեկենդանի տոներ, Կաղանդի տոն, Համբարձման («Ջանգուլում»-ի), Տյառնընդառաջի («Տըրընդեզ»-ի) տոներ: Այդ տոներին և աշակերտութիւնը պարում էր ուրախութիւն, ցնծութիւն:

Մենդյան, ինչպես և Զատիկի ու Բարեկենդանի տոներին, կազմակերպվում էին ներկայացումներ: Ներկայացումների մի մասը կազմակերպում էին հայրենակցական միութիւնները, օրինակ, վանեցիք ներկայացնում էին կաղանդը և կենցաղային բնույթ կրող պիեսներ, որոնք գրվում էին իրենց՝ ուսանողների կողմից: Ներկայացումները կազմակերպվում էին հաճախ ուսուցիչների ղեկավարութեամբ: Մի անգամ ներկայացրինք «Վիլհելմ Տեյլ»-ը: Ներկայացնում էինք նաև Հ. Պարոնյանի «Բաղդասար աղբար»-ը, «Մեծապատիվ մուրացիկներ»-ը, ինչպես նաև Մոլիերի գործերից: Այդ ներկայացումներին հրավիրվում էին նաև ձեմարանի ուսուցիչներին հետ միասին իրենց ընտանիքները, վանքի միաբաններից ոմանք: Ներկայացումներին աղջիկների, կանանց դերերը տղաներն էին կատարում: Մեծ հաջողութեամբ կատարվեց Հ. Հովհաննիսյանի ղեկավարութեամբ կազմակերպված Գոգոլի «Ռեվիզոր»-ի ներկայացումը, որուսաց լեզվով:

Կաղանդի օրը, նոր-տարվա նախօրեին՝ դեկտեմբերի 31-ի գիշերը, ուսանողները դարձյալ սեղան էին նստում իրենց ուսուցիչներին հետ: Անմոռաց է մնացել իմ հիշողության մեջ այդ տոներից մեկը: Սեղանի զխիւն բազմած էր մեր պատկանելի վերատեսուչը՝ Կարապետ Կոստանյանը: Նա տոնի առթիւ խոսում էր պատշաճ մի ճառ, շեշտում էր հայ ժողովրդի իմաստալից սովորութիւնները: Առաջը դրած մեծ, կլոր գաթան, որի մեջ դրված էր մի արծաթյա դրամ՝ «բախտը», մաս-մաս էր անում և կանչում ոմանց վերցնելու գաթայի որևէ կտորը. ով վերցնում էր այն կտորը, որի մեջ դրամն էր, նա էլ դառնում էր բախտավորը: Նրան ծափահարում էին: Սկսվում էր երգն ու պարը մինչև լուսաբաց:

Զատիկի տոներին աշակերտներին կարմիր ներկած ձու էին բաժանում, զանազան մրգեր, Բարեկենդանին՝ հատկապես «բաղամ» (նուշ): Աշակերտները ձու էին կովացնում Զատիկի օրերին, իսկ Բարեկենդանի օրերին՝ բաղամ էին խաղում: Զատիկին հաջորդող երրորդ՝ Կանաչ կիրակի օրը զբոսանք էր կատարվում Ներսիսյան անտառում, ուր և տեղի էր ունենում ավանդական ճաշկերույթը: «Ջանգուլում»-ի արարողութիւնը տեղի էր ունենում ձեմարանի հարավային կողմի պարտեզում, բոլոր մանրամասնութիւններով՝ ծաղիկ քաղել, բախտ բանալ, երգել և այլն:

Տոներին կազմակերպվում էին նաև էքսկուրսիաներ: Հաճախ, Կաղարշապատից ոչ շատ հեռու գյուղերում, ավաններում ապրողները, հեռուներից եկած ընկերներին հյուր էին տանում իրենց տները: Օրինակ, ինձ հետ գլուխ՝ Իզդիր էի տանում նոր-նախիջևանցի Ալեքսանդր Զոհրաբյանին, վայոց-ձորեցի (Գարալագյազ) Վահան Տեր-Խաչատրյանին: Գյուղում կազմակերպում էինք երեկույթներ և ժողովրդի առաջ դուրս էինք գալիս դասախոսութիւններով զանազան թեմաների շուրջը, մեծ մասամբ նյութ առնելով հայ ժողովրդի պատմութիւնից: Ամառվա արձակուրդներին էքսկուրսիաներ էին կազմակերպվում մեր աշխարհի ավելի հեռավոր վայրերը:

Ուզում եմ այստեղ պատմել մեր մի հեռավոր էքսկուրսիայի մասին:

1904 թվականի ամառային արձակուրդ՝ սկիզբներին, ձեմարանի մի խումբ ուսանողներ որոշեցինք հետիտոն էքսկուրսիա կազմակերպել դեպի հայրենիքի նվիրական վայրերը: Մեր էքսկուրսիային մասնակցում էին Ա. լսարանից 7—8 հոգի՝ Սիմոն Գրուզինյանը (Վրացյան), Արշավիր Շավարշյանը, Արշավիր Տեր-Մկրտչյանը, Անուշավան Միքայելյանը, իսկ թ լսարանից՝ Հակոբ Խաչրիսյանը, Գեղամ Տեր-Թովմասյանը և ես: Ուզ երեկոյան հասանք Երևան, հյուրընկալվեցինք մեր նախկին սիրելի ուսուցիչ, Երևանի թեմական առաջնորդի փոխանորդ Կարապետ եպիսկոպոսի մոտ (1903—1905), առաջնորդարանում, Ս. Սարգսի բակում: Առաջնորդարանը մի ընդարձակ, բազում սենյակներից բաղկացած մեծ շենք էր, ուներ մեծ, ընդարձակ, լայն պատշգամբ, որի առաջից աղմկահույզ Հրազդանն էր հոսում, իսկ դիմացից երևում էր հայ ժողովրդի ոգու մարմնացում Մասիսը՝ իր ամբողջ վեհաթեմայով: Այդ շենքը ցարդ գոյութիւն ունի, սակայն անշքացած վիճակում:

Հետևյալ առավոտ, կազմ ու պատրաստ, մեր խումբը դուրս եկավ Երևանից և ընթացավ դեպի Գառնի: Մի օր մնացինք Գառ-

նիտւմ, գիշերեցինք քահանայի և մի երկուսը գյուղացիների հյուրընկալ հարկերի տակ: Դիտեցինք Տրդատի պալատը, բերդը: Այդ ժամանակ երևում էին միայն հաստաբետ պարիսպների մնացորդները, մի քանի խոյակաձև տաշված, քանդված խոշոր քարեր: Պալատի դիրքը հռչակապ էր, շինված բարձրագրի վայրում, Ազատ գետի ապոռոտոս փոխին: Գյուղի միջով անցնում էր մի շատ խոշոր առու անուշահամ ջրով:

Գնում ենք Ղամարլու (Արտաշատ), դիտում ենք հինավուրց քաղաքի վայրերը, մտքով սլանում մեր պատմության խորքը, մեր մտքի աչքերով տեսնում պատմական Արտաշատը:

Հյուրընկալվում ենք Ղամարլուի քահանաներից մեկի տանը: Շարժվում ենք դեպի Խոր Վիրապ: Տեսնում ենք Գրիգոր Լուսավորչի բանար՝ Խոր Վիրապը, ուր, ըստ Ագանթագեղոսի, Լուսավորիչը մնացել է 14 տարի:

Մեր մի շարքի տևող այդ ճանապարհորդությունը մեծ մասամբ անցնում էր ուրախ, զվարճության մթնոլորտում: Հաճախ վիճաբանում էինք որևէ խնդրի շուրջը: Մեր ընկերներից միայն մեկը կար, որի հետ բոլորը գրկեց ընդհարվեցին. դա Գեղամն էր: Սա, օրինակ, Խոր Վիրապի վանահոր ընդունարանում մեզ հատկացված երկու անկողիններից մեկը ինքը յուրացրեց, մյուսը թողնելով բոլորիս: Այս և նման դեպքերը, հարկավ, առաջ բերին Գեղամի նկատմամբ տրտունջ, հանդիմանություն:

Մեր տեսած վայրերից ամենից ուշագրավը Գեղարդի վանքն էր, որ գտնվում էր Գառնիից դեպի արևելահյուսիս, Ազատ գետի բարձրաբերձ փոխին: Վանքը շինված է լեռան մեջ: Հայ բանվորներն ու վարպետները անխոնջ ջանասիրությամբ բաց են արել լեռան կուրծքը, ներս մտել և իրենց արվեստի հմտությամբ կերտել մի հռչակապ հուշարձան:

Հայ հավատացյալ ժողովուրդը դարձրել է այդ վանքը ուխտատեղի և հոծ բազմություններով այցի է եկել մեր այդ նվիրական հուշարձանին:

Երկու օր մնացինք այդ գեղահրաշ վայրում:

Ամեն տարի, Թարգմանչաց տոնին, էջմիածնի աշակերտությունը, ուսուցիչները, ծառայողները ուխտագնացություն էին կատարում դեպի Օշական՝ համբուրելու շիրիմն այն մեծ անձնավորության, որը հայ ժողովրդին պարգևեց իր գոյությունը հավետ պահպանելու և պաշտպանելու հզորագույն զինքը՝ այբուբենը:

Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը գտնվում է Օշականի մի բարձրության վրա, հովանա-

վորված եկեղեցիով: Եկեղեցում ժամասացութունը լսելուց հետո, ձեմարանի ընտանիքը հանգստանում էր վանքապատկան մի ընդարձակածավալ այգում: Այգում ճաշելուց և զվարճանալուց հետո, վերադառնում էինք էջմիածին՝ երգ ու պարով, ցնծությամբ:

Մեր էքսկուրսիայի օովորական վայրերից էր նաև Այլը լիճը, որի շուրջը շատ լեզանդներ են հյուսվել: Դրա մոտերքի բազում աղբյուրներից սկիզբ է առնում Մեծամորի (Սևջուր) գետը, որը թափվում է Արաքս գետը:



Ձեմարանում առավոտյան դարձնում էինք ժամը 7-ին, գիշերապահի ղանգակի հնչյունների տակ: Կվացվելուց անմիջապես հետո, ձեմարանի ղանգը հրավիրում էր առավոտյան աղոթքի: Շատ կարճ տևող աղոթքից հետո, աշակերտներն անցնում էին սերտարան՝ երկկոյան սովորած դասերը կրկնելու համար: Սերտողությունից հետո գնում էինք սեղանատուն՝ առավոտյան առաջին նախաճաշը վալսելու: Խմում էինք քաղցր թեյ, հետո մի «վանքի բումբի» (հաց) և մոթալի կամ հորած պանիր անուշ անելով: Այնուհետև սկսվում էին դասերը: Երեք դասից հետո տրվում էր հրկրորդ նախաճաշը: Դասերի ավարտից հետո փոքր հանդիստ էր լինում, ապա գնում էինք ճաշելու: Ծաշը միշտ երկու տեսակից էր լինում, երրորդը՝ աղանդեր՝ որևէ քաղցր: Մեր ճաշերը շատ սննդարար էին՝ ապուր, բորշ, շիլա, դոլմա, բողարթմա, խաշած միս, տապակած միս, խաշած կարտոլ ձեթով, կոտլետ, կարկանդակ ջրի ճաշի հետ, խաշած և տապակած ձկներ, քաշովի, փլավ, տարին 5 անգամ հարիսա՝ առատ յուղով: Տոն օրերին, հանդիսավոր օրերին մեր թե՛ ճաշը և թե՛ ընթրիքը լինում էին բազմատեսակ, ճոխ: Պաս օրերին՝ շոքեքշաքթի և ուրբաթ, շաբաթական պասերին և Մեծ պասին մեր սնունդը սրվասում էր: Տրվում էր լոբի, սրանից պատրաստված բազմատեսակ ճաշեր, սիսեռ, ոսպ, մախոխ, ջոնջոլ, որ բերվում էր Թիֆլիսից, պասվա փլավ, քաշովի, կարտոֆիլ և այլն:

Մեծ պասին աշակերտներից ոմանք «հավկոր»-ով հիվանդանում էին: Խրիմյան Հայրիկը, իմ աշակերտության ընթացքում, վերջին տարիներին հրամայեց, որ աշակերտների պասուց ճաշերը սահմանափակվեն միմիայն շոքեքշաքթի և ուրբաթ օրերով: Այդ բարեփոխությունը մտավոր աշխատանքով զբաղվող աշակերտների համար միանգամայն ողջունելի դարձավ, «հավկոր»-ով հիվանդացողներ այլևս չկային:

Մեծ պասի օրերին, ճաշի ժամանակ հաճախ աշակերտները երգիծական ոտանավորներ և պատմվածքներ էին կարդում: Հիշում եմ եղբայր Արտաշես Շահբազյանին, որը երգիծական մեծ ընդունակութիւն տեր էր: Նա այդ ճաշերի ժամանակ «հաստափոր դոլմա»-յի, լորու, մախոխի մասին հաճախ հիշույթներ էր ունենում և աշակերտութիւնը զվարճացնում: Այդ Շահբազյանը հետագազվարճացնում: Այդ Շահբազյանը հետմանիայում: Երկար ժամանակ Թիֆլիսում բժշկութիւն էր անում:

Թեյը մատուցվում էր աշակերտների կողմից: Սովորաբար թեյ մատակարարողները նշանակվում էին 6-րդ դասարանցիներից: Ճաշը մատուցում էին ձեմարանի սեղանատան սպասավորները: Գլխավոր մատակարարը վաղարշապատցի Հայրո պապիկն էր, որի աշխատանքային շաբաթը 25-ամյա հոբելյանը կատարել են իմ ավարտելուց՝ 1905 թվականից հետո:

Ճաշից հետո երկու և ավելի ժամ հանգրստանում էինք: Երեկոյան երկու ժամ հատկացվում էր դասեր պատրաստելուն, դասարանցիք պարապում էին ընդհանուր սերտարանում, իսկ լսարանցիք՝ իրենց լսարաններում: Լսարանցիների ժամերը սահմանափակված չէին. նրանք վաշելում էին որոշ արտոնութիւն. օրինակ՝ կարող էին քնել ցանկացած ժամին, կարող էին պարապել մինչև ուշ գիշեր, իսկ դասարանցիք քնելու էին զնում ժամը 9-ին: Լսարանցիք վաշելում էին և այլ արտոնութիւններ. նրանք ազատ ժամերին, առանց վերակացուից իրավունք ստանալու, կարող էին զրոսանքի դուրս գալ ձեմարանի պարիսպներից դուրս. կարող էին այցելել դոկտորում եղած իրենց ծանոթներին, բարեկամներին և այլն:

Երեկոյան թեյը, ընթրիքը վաշելուց հետո, մի ժամ անց հնչում էր գիշերային աղոթքի հրավերի զանգը: Ամբողջ աշակերտութիւնը, վերակացուները, տեսչի կամ նրա օգնականի գլխավորութիւնամբ, երկու շաբթի վրա, աղոթքի էին կանգնում երկրորդ հարկի ընդարձակ միջասրահում: Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի տեսչութիւն ժամանակ, աղոթքը միշտ կատարվում էր նրա գլխավորութիւնամբ: Սովորաբար փոքրիկներից լավ ձայն ունեցող մեկը մենեքում էր. ամեն մի տնից հետո բոլորս ձայնակցում էինք եղանակելով «ամեն»: Հատուկ ձեմարանի համար հորինված այդ աղոթքից մի երկու բան մնացել է մտքումս.

— Տէ՛ր Աստուած մեր, հաստատուն պահե՛ա՛ զՄայր Աթոռն մեր Սուրբ Էջմիածին և զԳահակալ Նորին զՏէ՛ր Տէ՛ր Մկրտիչ Սրբազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց:

— Ամէ՛ն:
— Տէ՛ր Աստուած մեր, պահե՛ա՛ զտեսուչ ձեմարանիս, զուսուցիչս և զեղբայրութիւնս մեր:

— Ամէ՛ն:
— Տէ՛ր Աստուած մեր, յիշե՛ա զհոգի հանգուցյալ հայրապետին մերոյ Տեառն Գէորգայ, հիմնադրին ձեմարանիս, և հանգո՛ղնա ի լոյս երեսաց քոց:

— Ամէ՛ն:
Այնուհետև երգում էինք բոլորս միասին. Շնորհալու «խաղաղութեան ժամ»-ի «Նայցա սիրով» երգի հետևյալ տունը.

«Միբոյ քո հուր արկեալ յերկիր,
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ,
Ի քնոյ մահու զմեզ զարթուցէ,
Զմիտս բոցով քով վառեսցէ...»:

Այդ երգից հետո երկու շաբթերը դառնում էին միմյանց դեմոդեմ, խոնարհում գլուխները՝ ի նշան «բարի գիշեր»-ի, իսկ Կարապետ հայր սուրբը խաշակներում էր մեզ ասելով. «Հանգերուք ի խաղաղութեան և՛ Տէր Յիսուս եղիցի. ընդ ձեզ, ընդ մամեսեսանր: Ամէն»:

Ապա գույգ-գույգ իջնում էինք և ուղղվում դեպի արևելյան կողմը կառուցված մեծ ու ընդարձակ ննջարանները:

Գիշերները, աղոտ յուլսի տակ, հսկում էին մեզ գիշերապահ սպասավորները, որոնք աշակերտներին վերաբերվում էին այնպես, ինչպես իրենց հարազատ զավակներին կամ եղբայրներին:

Լսարանցիների ննջարանը ձեմարանի հյուսիս-արևելյան կողմն ընկած Սինոգի հին շենքն էր, երկու հարկանի պատշգամբներով:

Գարնան վերջերին կամ ամռան սկիզբներին մենք հաճախ նստում էինք պատշգամբում և մեր գիշերապահ Նախո՞ քեռուն երգել էինք տալիս «Սասունցի Դավիթ» դյուցադներգութիւնից հատվածներ: Նա պատմում էր, տեղ-տեղ երգում, երգում և պատմում էր ինքնամոտոսցութիւն մեզ ընկած, հուզվում էր, ոգևորվում և մեզ էլ համակում իր հույզերով, տրամադրութիւններով:

Կիրակի օրերը բոլորս զնում էինք եկեղեցի, վերարկուներ հագած, իսկ մյուս օրերը, առավոտյան և երեկոյան ժամասացութիւններին վաճաք էինք զնում խմբերով, հերթականութիւնամբ: Այդ հաճախումները քիչ ժամանակ էին խլում, գրեթե կես ժամվա տևողութիւնամբ:

Ամիսը երկու անգամ բաղանիք էինք զնում: Մեր սպիտակեղենները, մաքուր լվացված, դրվում էին մեր մահճակալների վրա, սամանները փոխվում էին երկու շաբաթը մեկ:

Գյուղից՝ վաղարշապատից հրավիրվում էին վարսավիրները Աշակերտները պետք է մագերը խուզեին տակից, իսկ լսարանցիք՝ ինչ ձևով որ ուզեին կարող էին սարքել տալ իրենց մագերը: Մագերը լավ սարքել տալու մեջ հռչակված էր վանեցի Հրանտ Սրվաշն՝-տյանը: Նա ընդհանրապես լավ սովորելուց զատ հատուկ ուշադրություն էր դարձնում նաև իր արտաքինին:

Մենք ունեինք հատուկ կողակարներ և կոշիկ մաքրողներ: Տարեկան մեզ տրվում էր երկու ձեռք հագուստ՝ ամառային և ձմեռային:

Ճեմարանն ուներ իր հատուկ հիվանդանոցը, որ գտնվում էր Ճեմարանի շենքի և ննջարանի միջև ընկած մի փոքրիկ տարածություն վրա: Հիվանդանոցը մի հարկանի անշտաշեն շենք էր, ուներ իր հատուկ բժիշկը, բուժակը և մյուս օժանդակող սպասավորները:

Իմ ճեմարանական շրջանում բժիշկը երևանցի կարապետ Խաչատրյանն էր: Նա թե՛ ճեմարանում, թե՛ վանքում և թե՛ վաղարշապատում վայելում էր մեծ հեղինակություն: Նա բարեխիղճ, հոգատար և հմուտ բժիշկ էր: Խաչատրյանի բժշկության ժամանակաշրջանում հիվանդացել են շատերը, եղել են նաև ծանր հիվանդության դեպքեր, սակայն բոլորն էլ առողջացել և սպաքինվել են, ո՛չ մի դժբախտ դեպք տեղի չի ունեցել: Ճեմարանի բուժակներից «Ֆելդշեր» Պետրոսը հայտնի է եղել իր երկարատև և բարեխիղճ ծառայությանը:

Հիվանդանոցի սպասարկումը հիանալի էր, խնամքը, հոգատարությունը գովելի: Հիվանդների սնունդը բարձր որակի էր և տրվում էր բժշկի հրահանգների համաձայն: Հիվանդանոց էին հաճախում նաև այնպիսի «հիվանդ»-ներ, որոնք ծուլության պատճառով դասերը պատրաստած չէին լինում, կամ խուսափել էին ուզում որևէ պարտականություն կատարելուց: Այդպիսիներին մեր բարի բժիշկը ոչ մի դեղ չէր նշանակում, այլ բժիշկադրով ասում էր. «Մի երկու օր կպահես, մինչև որ «հիվանդություն»-դ կանցնի, նոր դուրս կգրեմ...»:

Ճեմարանի աշակերտները իրենց մտավոր սնունդն ստանում էին լուսավոր, ընդարձակ դասասենյակներում, գրադարանում, հանդիսարանում: Աշխատանքից հետո ճեմարանցիք իրենց հանգիստը վայելում էին ճեմարանի հյուսիսային և հարավային ընդարձակ բակերում: Այդ բակերը ծածկված էին կանաչով, ծառերով, ծաղկանոցներով: Հատկապես հարավային ընդարձակ բակը մշակվում էր աշակերտների հայրենակցական միությունների կողմից: Կային վանեցիների, թիֆլիս-

ցիների, դարաբաղցիների, իգգիրցիների, վաղարշապատցիների, ալաշկերտցիների և այլն մարգեր: Այդ մարգերը լավ ձևավորված էին և ծաղկապատված: Դրանք բաժանվում էին ծառուղիներով: Պարտեզներում, մարգերում շինված էին սեղաններ, նստարաններ: Մարգերի միջով, ծառուղիների եզրերով, խոխոշելով հոսում էին առվակների ջինջ ջրերը:

Վանեցիների մարգի մոտ կառուցված էր մի ավաղան, միշտ ջրով լցված: Տաք օրերին աշակերտներն այդ ավաղանում զովանում էին լողանալով:

ՃԵՄԱՐԱՆԻ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԸ

Ճեմարանին սպասարկում էր տեխնիկական աշխատողների մի ստվար խումբ: Այդ ծառաները մեծ մասամբ գալիս էին արևմտյան Հայաստանից—Վանից, Մոկաց երկրից, Ռշտունյաց աշխարհից, Ալաշկերտից:

Ճեմարանի ծառաներից հիշում եմ Նախտ քեռու, որը բարձրահասակ, ճեմարանում զլխով, բարի հայացքով մի մարդ էր: Նա վերին աստիճանի հոգատար էր դեպի աշակերտները, մանավանդ դեպի փոքրերը: Նախտ քեռու հայրական վերաբերմունքը աշակերտներին ներշնչում էր ակնածանք, հարգանք ու սեր դեպի ինքը:

Մեկիկ-մեկիկ երևակայությանս աչքերով տեսնում եմ Մուրադին, Նազարին, Զատիկին, Հայրոյին: Ինչքա՛ն լավ, բարի՛, սրտացա՛վ մարդիկ էին դրանք: Նրանցից շատերը ճեմարանի աշակերտներից դասեր էին առնում, ձեռք էին բերում որոշ գիտելիքներ: Նրանք վերադառնում էին իրենց վայրերը և իրենց ձեռք բերած գիտելիքները գործադրում էին իրենց հայրենակիցներին օգտակար լինելու համար: Նրանցից ոմանք իրենց գյուղերի՝ դպրոցներում ուսուցիչներ էին դառնում, մինչև անգամ տեսուչ, նոր դպրոցներ էին բաց անում և այդպիսով ճեմարանից ստացած լույսը վառում ու տարածում էին օսմանյան լծի տակ տառապող իրենց խավար գյուղերում: Պատմում էին, որ Մուրադը Մոկաց աշխարհում մի շարք դպրոցներ է բացել և ղեկավարել իր տեսչության ներքո: Շատերը դրանցից վերջին հրաժեշտն էին տալիս ճեմարանին, իսկ ոմանք էլ մի քանի տարի իրենց ընտանիքների մոտ մնալուց հետո, նորից վերադառնում էին ճեմարան: Օրինակ՝ Նախտ քեռին ճեմարանում ծառայել է երեք նվազ:

ՃԵՄԱՐԱՆԻ ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Երբ ես ընդունվեցի ճեմարան, Ա դասարանում 36 հոգի էինք, իսկ ճեմարանի:

ավարտեցին 9 հոգի, որոնցից երկու հոգի Ա դասարանից չէին բարձրացել:

Ես ավարտեցի լսարանական բաժինը 1905 թվականի գարնանը: Մեջ եմ բերում ավարտողներին անունների ցանկը.

1. Ասլանյան Միոն՝ վաղարշապատցի.
2. Ատոմյան Կորյուն՝ կարնեցի.
3. Խալըխյան Հակոբ՝ մեծ-սալացի (Նոր-Նախիջևան).
4. Կանայան Խաչատուր՝ Իգդիրցի.
5. Տատյան Լյուդովիկ՝ օրդուցի.
6. Տեր-Խաչատրյան Վահան՝ մալիշկացի (Դարալագյազ—Վայոց ձոր).
7. Տեր-Պողոսյան Եղիշե՝ վարդաշենցի (Ուտի).
8. Տերտերյան Արսեն՝ շուշեցի.
9. Քրիշչյան Մելքոն՝ ցղնացի (Ագուլիսի շրջան):

Մենք ավարտական քննությունների համար պարապում էինք մեծ եռանդով: Օրնիբուն աշխատում էինք, ոմանք պարապում էին առանձին, մենակ, իսկ ոմանք էլ երկու էին առանձին, մենակ, իսկ ոմանք էլ երկու էին Վահանի հետ. մենք Ա դասարանից մինչև վերջ միասին ենք նստել գրասեղանի առաջ, հաճախ միասին պարապել: Քննություններին համար մի տարի ժամանակ էր տրվում: Նյութերը հանձնարարվում էին դեռևս թ լսարանում: Երբ հանձնարարվում էին մեր պատմությունից, մեր գրականությունից: Լինում էին նյութեր նաև ուսուցիչի և երկրպագու գրականությունից, ինչպես նաև փոխտնօրինի և առարկաներից: Նյութը կարող էր նաև ընտրել ուսանողը և առաջարկել հաստատության, իսկ սովորաբար առաջարկվում էր դեկավար ուսուցչի կողմից: Իմ ավարտական շարադրության թեման էր «Տասնութերորդ գարու էջմիածնի նվիրակության պատմությունը»: Դեկավարում էր Հուսիկ վարդապետ Զոհրաբյանը:

Այդ շարադրությունները գնահատվելուց հետո միայն հանձնվում էր դիպլոմը: Դիպլոմի մեջ հիշատակվում էր նաև ավարտական շարադրության թեմայի վերնագիրը: Մեր դիպլոմները գրվում էին հայերեն և ուսուցիչները որակյալ թղթի վրա: Դիպլոմն ստորագրում էին վերատեսուչը և մանկավարժական խորհրդի գիտական քարտուղարը: Դիպլոմը կնքվում էր զմուռուով: Մեր լսարանի շրջանավարտներս նվիրվեցինք ուսուցչական գործունեության: Ճեմարանի իմ ընկերներից հոգումով հիշում եմ հետևյալներին.

«Ավարտական խումբ, դեպ հանդիսարան, Այնտեղ կսպասե Մակար սրբազան. Պարոն տեսուչը բացեց բերանը, Սեղանի առաջ ցցվեց Վահանը:

7 Ավարտական քննության տոմսերը կազմում էինք մենք ավարտողներս, ըստ ծրագրի և սպա տալիս քննական հանձնաժողովին ի հաստատություն:

Նրա հետևից գալիս է Հակոբ, Գլխում զետեղված պատմությունն ամփոփ. Կարկուտ խոսքերի տեղում է տարափ, Ընթերականներ շմամտ են անշափ:

Ահա գալիս է Եղիշեն առաջ Եվ Նիհար կրծքից դուրս թողնում հառա՛շ. Երբորդ տոմսակը խիստ օրհասական, Չար բախտի բերմամբ դուրս եկավ նրանա:

Դեռևս բոլորիս նվիրված քառյակները շավարտած, կանչվեցինք քննության:

Քննությունները տեղում էին հաճախ մինչև ուշ գիշեր: Հարցաքննում էին շատ երկար, մանրամասն: Քննություններն հաջող տալուց հետո, դուրս էինք գալիս բակ և թարմ օդ ծծելով, հանգիստ զբոսնում ու զրուցում էինք լուսնի կաթնագուլն շողերի ներքո:

Ճեմարանն ավարտելու համար միայն ավարտական քննությունները բավական չէին: Ամեն մի շրջանավարտ պետք է ներկայացնեք ավարտական շարադրություն: Ավարտական շարադրությունները գրելու համար մի տարի ժամանակ էր տրվում: Նյութերը հանձնարարվում էին դեռևս թ լսարանում: Երբ հանձնարարվում էին մեր պատմությունից, մեր գրականությունից: Լինում էին նյութեր նաև ուսուցչի և երկրպագու գրականությունից, ինչպես նաև փոխտնօրինի և առարկաներից: Նյութը կարող էր նաև ընտրել ուսանողը և առաջարկել հաստատության, իսկ սովորաբար առաջարկվում էր դեկավար ուսուցչի կողմից: Իմ ավարտական շարադրության թեման էր «Տասնութերորդ գարու էջմիածնի նվիրակության պատմությունը»: Դեկավարում էր Հուսիկ վարդապետ Զոհրաբյանը:

Այդ շարադրությունները գնահատվելուց հետո միայն հանձնվում էր դիպլոմը: Դիպլոմի մեջ հիշատակվում էր նաև ավարտական շարադրության թեմայի վերնագիրը: Մեր դիպլոմները գրվում էին հայերեն և ուսուցիչները որակյալ թղթի վրա: Դիպլոմն ստորագրում էին վերատեսուչը և մանկավարժական խորհրդի գիտական քարտուղարը: Դիպլոմը կնքվում էր զմուռուով:

Մեր լսարանի շրջանավարտներս նվիրվեցինք ուսուցչական գործունեության:

Ճեմարանի իմ ընկերներից հոգումով հիշում եմ հետևյալներին.

Խալըխյան Հակոբ.— Նոր Նախիջևանին մոտիկ գտնված հայ գյուղերից մեկի՝ Մեծ Սալայի բնակիչ էր: Միջահասակ, շիկավուն մազերով, բարի, հանդարտաբարո, խոսում էր հանգիստ, աղմուկ ու վիճաբանություն չէր սիրում: Լավ ընկեր էր: Ետ աշխատասեր

էր, պարագում էր անընդհատ: Մեր ընկերական-հասարակական գործերին ակտիվ մասնակցութուն ունեւր: Արձակուրդներին հաճախ ելուցթներ էր ունենում գյուղերում, հասարակութւյան առաջ: Հիշում եմ, մի անգամ նրան սկսեցինք քննադատել այն բանի համար, որ Աշտարակում իր բանախոսութւյան մեջ շափից ավելի էր գովարանել Գրիգոր Արծրունուն: Մենք հակամշակականներ էինք մեծ մասամբ:

Խայրխայնը ձեւմարանն ավարտելուց հետո, իր հայրենիքում աշխատում էր դպրոցական ասպարեզում: Նա ջերմ հայրենասեր էր և դաղութում վառ էր պահում հայ լեզվի և գրականութւյան անմար ջահը: Զարհուրելի 1937 թվականին մեր սիրելի ընկեր Հակոբը նույնպէս բազմահազար ու բյուրավոր անմեղ զոհվածներից մեկը եղաւ:

Տաւյան Լյաւրովիկի.— Միջահասակ, թուխ դեմքով մի պատանի էր նա: Լյուրովիկը եկել էր Սև ծովի ափերից, Թուրքիայի Օրդու քաղաքից: Մածկամիտ էր նա, քիչ էր շփոււմ ընկերների հետ, սակայն շփվելիս կատակել գիտեր, նույնիսկ երգել, պարել: Տոներին նա մինչև անգամ պարում էր և պարեր սովորեցնում ուրիշներին: Հիշում եմ նրա սովորեցրած պարերից մեկը՝ «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ...», որ կատարվում էր երգելով: Տաւյանը դեռ ձեւմարանում, Հ. Հովհաննիսյանի օժանդակութւյամբ, թարգմանեց Գոգոլի «Ռեկիդոր»-ը («Վերաքննիչ»-ը), որ հետո հրատարակվեց Վ. Տ. ստորագրութւյամբ: Նա Պարսկաստան էր անցել և դբադվել ուսուցչութւյամբ:

Տեր-Խաչատրյան Վահան.— Բարձրահասակ, համակրելի դեմքով մի պատանի էր, որը հենց առաջին դասարաններից աչքի ընկալ իր հուժկու ձայնով: Նա հաճախ դասարանում, դասերից հետո, իրեն երեսկայում էր աշուղ և քանոնը ձեռքն առած սկսում էր երգել այնքան բարձրաձայն, որ հաճախ մենք ստիպված էինք լինում մեր ականջները փակել: Երբ Կոմիտասը վերահասու դարձաւ Վահանի ձայնին, խստիվ արգելեց նրան երգելու մեր շրջանում, կտրուկ արգելեց նրան աշուղութիւն անելը: Այնուհետև Վահանը դարձաւ Կոմիտասի երգչախմբի ծաղիկը, թե ու թիկունք հանդիսացաւ վարդապետին, Մելքոնի հետ միասին: Վայոց Ձորի այդ տղան ընկերասեր էր, խիղախ, քաջ, ջերմ հայրենասեր: Իմ ձեւմարանական կյանքում համարյա միշտ միասին էինք, միևնույն սեղանին էինք պարապում, կողք-կողքի: Երբեմն էլ խոսվում էինք միմյանցից, օրերով չէինք խոսում իրար հետ:

Վահանը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայում էր ցարական

բանակում. նա սպա էր, իր քաջագործութւններին համար արժանացել էր թրի և Գևորգի շքանշանի:

Տեր-Խաչատրյանը լավ երգիչ էր, ուսուցիչ, թարգմանիչ, գրականագետ: Նա էլ անժամանակ թողեց այս աշխարհը: Ահալոր 1937 թվականը նրան էլ կլանեց:

Տեր-Պողոսյան Եղիշե.— Միջահասակ, նեղ կրծքով, փոքր, երկարավուն գլխով, շեշտ դեմքով մի գրեթե սևամորթ պատանի էր նա: Այդ վարդաշենցի ուտին լավ էր սովորում, հատկապէս հետաքրքրվում էր հայոց լեզվով: Գեռես Գ թե Ե դասարանում նա մի ծրագիր էր մշակել, որպէսզի կոչկոտիլ ուժերով սկսենք կազմել «Հայ լեզվի խնդրառութւյան բառարան»: Այդ աշխատանքն սկսվեց և սաղմնային վիճակում էլ մեռաւ:

Եղիշեն կասկածամիտ էր, ոչ ոքի հետ մտերմանալ չէր կարողանում:

Տարիներ անցած, լսում էինք, որ Եղիշեն Պոլիս է գնացել:

Տերտերյան Արսեն.— Ձեւմարան եկալ Շուշի քաղաքից: Նա ավարտել էր Շուշու թեմական դպրոցը և եկել էջմիածին՝ շարունակելու իր ուսումը ձեւմարանում: Տերտերյանը Ա լսարան ընդունվեց 1902 թվականի սեպտեմբերին, ընկերակցելով մեզ: Մենք ձեւմարանի դպրոցական բաժինն ավարտելով անցել էինք բարձրագույնը:

Արսեն Տերտերյանը բարձրահասակ էր, խրոխտ, քայլում էր հաստատուն, աներբ քայլերով, գլուխը միշտ բարձր պահած: Տերտերյանը հեշտութւյամբ մտերմանալ չգիտեր, դժվարութւյամբ էր մոտենում ընկերներին, ինքնամփոփ էր, գրեթե շարունակ միայնակ, ինքն իր խոհերի հետ: Նա շատ աշխատասեր էր, օրերը կարգում էր ու կարգում, կարգում էր ավելի շատ գեղարվեստական-գրական-քննադատական գրականութիւն: Արսենը մեր ընկերական շրջանից համարյա մեկուսացած էր, մինչև վերջ էլ մի մտերիմ ընկեր չունեցաւ: Բոլորիս հետ էլ լավ հարաբերութւյան մեջ էր, լոկ իբրև դասընկեր: Ձեւմարանն ավարտելուց հետո, Տերտերյանը գնում է Երևան և թեմական դպրոցում դասավանդում հայ գրականութիւն, հայոց պատմութիւն: Նա շարունակ աշխատել է Երևանում, քիչ ընդհատումով: Արսեն Տերտերյանը ուսուցչութւյան հետ միասին գրադվում է նաև գրականագիտութւյամբ: Գրում է գրաքննադատական ուսումնասիրութիւններ: Տերտերյանի համբավը, իբրև լավ գրականագետի, հռչակվում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու ժամանակաշրջանում: Հայաստանի համալսարանական առաջին և լավագույն դասախոսներից էր և մինչև իր կյանքի վերջը աշխատում էր

համալսարանում: Տերտերյանն ընտրվել էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Ա. Տերտերյանը, իր մեծ աշխատասիրության շնորհիվ, շարքային ուսուցչից հետզհետե՝ բարձրացավ մինչև ակադեմիկոսի աստիճանը: Նա իր անձնվեր աշխատանքով բազում ուսանողներ կրթեց, կադրեր պատրաստեց: Այսօրվա շատ գրականագետներ նրա սաներն են:

Մեր ընկերականությունը վերսկսվեց Երևանում, այստեղ հինավուրց էջմիածնական դասընկերներս դարձանք իսկական ընկերներ:

Քրիշչյան Մելիքն.— Գողթան գավառի Ցղնա գյուղացի էր Մելքոնը, բարձրահասակ, հայկական դիմագծերով օժտված մի անձ, միշտ մտախոհ, խորհրդավոր հայացքով, կարծես ինչ-որ հոգսերով ծանրաբեռնված: Ուսանողական ժողովներին և առհասարակ որևէ հավաքույթի ժամանակ նա միշտ լուրջ էր: Քիչ էր պատահում, որ մեր ուսանողական-ընկերական կատակներին և խաղերին մասնակից լիներ:

Քրիշչյանը նմանապես Կոմիտասի լավագույն աշակերտներից էր, նրա անմիջական գործակիցներից մեկը, ինչպես և Վահանը: Մելքոնը, Ճեմարանն ավարտելուց հետո, շատ ժամանակ շանցած, անցնում է Գերմանիա, իր ուսումը կատարելագործելու համար: Գերմանիայում մնում է երկար տարիներ, ամուսնանում է գերմանուհու հետ: Քրիշչյանը հայտնվում է Կովկասում իր տիկնոջ հետ 1913 թվականին: Երկա՛ր, երկա՛ր տարիներ թափառեց Մելքոնը Եվրոպայում և այլուր: Իր ազգօգուտ աշխատանքը նա շարունակեց Սփյուռքի հայության մեջ՝ հատկապես զբաղվելով ուսուցչությամբ: Սփյուռքում նա գրեց իր սիրելի ուսուցչի՝ Կոմիտասի մասին հուշեր՝ ամփոփված մի գրքում:

Հայրենիքի կարոտը ծերուցյան հասակում նրան բերեց հայրենիք՝ Հայաստան: Երեք տարի առաջ նա իր տիկնոջ հետ վերադարձավ Երևան: Այժմ նա թողնակառու է, ապրում է պետության կողմից իրեն հատկացված մի հարմարավետ բնակարանում, Կիևյան փողոցում, խաղաղ ու անդորր վայելելով ծերությունը հայրենի հարազատ հողում:

